1847 ին։ Կիրակոս պտրք. ունի 52 քարոզներ տէրունական տօներու և սուրբերու վրայ, աշխարհաբար լեզուով. ընդօրինակուած՝ 1861ին Վանեցի Մկրտիչ սրկ.ի ձեռքով. ոսկեզօծել տուած է նաեւ Ս. Հրեշտակապետի, Ս. Յակոբի եւ Ս. Ծննդեան տաճարներուն խաչկալները. այս ոսկեզօծումներուն յիշատակարաններէն մին՝ որ կը գտնուի Ս. Յակոբ եկեղեցիին Աւագ սեղանին կամարաբերձ սիւներուն վրայ գրուած բոլորակ ձեւով է, և ընդօրինակութիւնն է հետեւեալը. «Նորոգեցաւ ոսկեզօծ որմն բոլոր ոսկեզօծելի տեղեաց սրբոյ Տաճարիս և այլոց արդեամբք Աղգիս Հայոց ի պատրիարքութեան Տեառն Կիրակոսի Արքեպիսկոպոսի՝ երուսաղեմացւոյ, յամի Տեառն 1847 և Հայոց ՌՄՂԶ»։ Վախճանած է 1850 ին եւ թաղուած է Ս. Փրկչի վանքը եւ իր տապանագիրն է հետեւեալը.

«Հօտին Քրիստոսի հովիւ հոգեկան,
բանական հնձոց մշակ տէրունական,
հայելի ընտիր վարուք մաքրութեան
անձանձիր քարոզ կենացն անվախճան,
Նորոգիչ գահոյս տեղեաց զանազան
որք կան ակներև գրեալ ի յարձան։
Հովուապետ բարի,
փրկիչ աշխարհի,
տուր սմա տեղի
ի քում խորանի։
1850 Մայիս 25։»

ԿԻՐԱԿՈՍ ՎՐԴ. ԱԶԱՐԵԱՆՑ, ԿԼԻՊՈԼՈՒՑԻ.—Մբ. Ծ. 1786 ին, աւազանի անունը Յակոբ։ Զռ. 1851 ին, ՏՊ. 1866 ին. ՏՑ. (1869-70)։ ՏՑՊ. 1871ին. ՏՀ. (1874-77). Գանձապետ վանուց 1877ին. ՏԲ. (1885-86). Բ. անգամ ՏՀ. (1887-1891). կը վախճանի 1892ին։ Ի նպաստ Ս. Յակոբի վանքին Երուսաղէմի մէջ յիշատակ կը թողու երկու մթերանոցներ, և 1862 ին նուիրած է նաև արծաթ և ոսկեզօծ սկիհ մը (Յուց. Պ.)։

ԿԻՐԱԿՈՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻ.— Որդի Պատուականի, ՌՃԼԲ (= 1683), կը յիշուի գործակալ Ս. Յակոբի վանքին, (ՄՁ. Թ. 1390), նուիրած է Ալբերդոսի գիրքին մէկ ձեռագիրը, որուն յիշատակարանը կը գտնենք հոս.